ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 16-Ի՝
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՐՏԱՀԵՐԹ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՆԻՍՏԻ

Նիստին մասնակցում էր Երևանի ավագանու 5 անդամ:

Նիստը վարում էր Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ, Երևանի քաղաքապետի պաշտոնակատար Կ. Արեյանը:

Երևանի ավագանու նիստին հրավիրված էին՝ Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղար Ս.Մակարյանը, Երևանի քաղաքապետի խորհրդական Գ.Բաղդասարյանը աշխատակազմի քարտուղարի տեղակալ Ս.Մերթարջյանը, քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության պետ Զ. Առաքելյանը, տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչության պետ Ա. Գևորգյանը:

«Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 44-րդ և 46-րդ հոդվածների և Երևանի ավագանու 2018 թվականի հուլիսի 12-ի N154-Ա որոշման համաձայն, 2018թ. հուլիսի 16-ին գումարված Երևանի ավագանու նիստում Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ, Երևանի քաղաքապետի պաշտոնակատար Կ.Արեյանը տեղեկացրեց «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 29-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ավագանու նիստը իրավազոր է, եթե նիստին ներկա է ավագանու անդամների՝ օրենքով սահմանված թվի կեսից ավելին: Հաշվի առնելով, որ Երևանի ավագանու 2018 թվականի հուլիսի 16-ի նիստին ներկա է ավագանու 5 անդամ, ուստի՝ նիստն իրավազոր չէ և քվորում չի ապահովվել, հետևաբար, ղեկավարվելով Երևան քաղաքի ավագանու կանոնակարգի 114-րդ կետի 2-րդ ենթակետով՝ հայտարարվեց 30 րոպե տևողությամբ ընդմիջում:

Նիստը վերսկսվեց ժամը 11.30-ին:

Հաշվի առնելով, որ 2018 թվականի հուլիսի 16-ի նիստին ներկա են ավագանու 5 անդամ և նիստն իրավազոր չէ, ուստի՝ հիմք ընդունելով Երևան քաղաքի ավագանու կանոնակարգի 114-րդ կետի 2-րդ ենթակետը՝ նիստը համարվում է չկայացած:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ,
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Կ. ԱՐԵՅԱՆ

Կազմեց՝
Ն.Ղուկասյանը